ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95

ք. Երևան « 25 » « 09 » 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ջերմուկշին» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Կ.Ստեփանյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորսի Օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգման» և «ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորբատեղի աղբյուրակապի և ՕԿՋ-ի հիմնանորոգման»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են**

1-ին չափաբաժին՝ «ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորսի Օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգման»՝ Կողմերի միջև կնքվող ֆինանսական միջոցների առկայության մասին լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 75 օր:

2-րդ չափաբաժին՝ «ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորբատեղի աղբյուրակապի և ՕԿՋ-ի հիմնանորոգման»՝ Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 50 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի

թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի

մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **21,360,000 (քսանմեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 3,560,000 (երեք միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 14,400,000 (տասչորս միլիոն չորս հարյուր) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին՝ 6,960,000 (վեց միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[33] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

---

[1] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[33] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[34] : Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

---

[34] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

կիանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կիանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N1.1, N2, N3, N4, N4.1, N6 և N6.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրի 1-ին չափաբաժնով՝ «ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորսի Օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգման» նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա

կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ջերմուկշին>> ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ ք.Ջերմուկ, Շահումյան 25.
ՀՎՀՀ 5609000604
Հ/Հ 2478000008010999
<<Արդշինբանկ>>ՓԲԸ<<Ջերմուկ>> մ/ճ

Գործադիր տնօրեն
Կորյուն Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1.1
« 25 » « 09 » 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95 ծածկագրով պայմանագրի
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորբատեղի աղբյուրակապի և ՕԿՋ-ի հիմնանորոգման»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

<<	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակ	Հազ. դրամ	
				Միավորի արժեքը	Ընդամենը
	Հողային աշխատանքներ				
1	III կարգի գրունտի մշակում ձեռքով	մ^3	302	2.452	741.495
2	II կարգի գրունտի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ^3	212	1.025	216.956
3	Հողի հարթեցում տեղում	մ3	81	1.596	128.810
4	Ավելորդ գրունտի հավաքում և բարձում	մ3	10	0.584	5.838
5	Շին աղբի և ավելորդ գրունտի տեղափոխում 1կմ հեռավորության վրա	տ	72	4.061	292.376
6	Պատեր			0.000	0.000
7	Ներսի Պատերի ց/ա սվաղ բարձր որակի	մ2	260	3.723	968.099
8	Դրսի պատերի ց/ա սվաղ բարձր որակի	մ2	180	3.736	672.558
9	Ծածկ			0.000	0.000
10	Հորի էլեմենտ ՕՀ-1	հատ	2	132.968	265.935
11	Թուջե մտոցի տեղադրում Φ700մմ	հատ	2	85.717	171.435
12	Ծածկի սալ ПКЖ 6,0-1,5	հատ	4	204.141	816.566
13	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.44	282.269	124.198
14	Անկյունակ L100x10մմ	կգ	4	8.822	35.289
15	Ամրան Ø10AI	տ	0.35	517.794	181.228
16	Ե/բ միաձույլ ծածկի սալի պատրաստում B22,5 դասի բետոնից	մ^3	6	78.932	473.593
17	Ամրան Ø8AI	տ	0.606	503.147	304.907
18	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.66	282.269	186.298

19	Խողովակ DH=76x4մմ	մ	15	4.489	67.334
20	Ամրան Ø10Al	տ	0.2	517.794	103.559
21	Ծածկի հիդրոմեկուսացում իզոգամից 2 շերտ	մ2	60	7.239	434.360
22	Կավի շերտ 200մմ	մ2	60	6.915	414.899
23	DH=76x4մմ տրամագծով պողպատե խողովակի մոնտաժ	գմ	35	7.356	257.463
24	Պոլիէթիլենային խողովակի մենտաժ, օդափոխության համար 150մմ	գմ	16	3.775	60.406
25	Φ76մմ լողանավոր փականի մոնտաժում	հատ	4.0	28.763	115.051
26	Φ76 ձևավոր մասերի մոնտաժում	հատ	10.0	2.997	29.969
27	Φ76 սողնակային փականի մոնտաժում կցաշուրթերով	հատ	6.0	36.975	221.851
28	Φ108x4,0մմ տրամագծով ջրի խողովակի մոնտաժ	գմ	35.0	5.241	183.448
29	Φ108 ձևավոր մասերի մոնտաժում	հատ	10.0	3.736	37.364
30	Խողովակի ձևավոր մասերի մոնտաժում	հատ	24.0	1.051	25.221
	Ընդամենը				7536.50
	ԱԱՀ 20%				1507.30
	Ամբողջը				9043.8

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորբատեղ հասցեում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Ջերմուկշին>> ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ ք.Ջերմուկ, Շահումյան 25.
ՀՎՀՀ 5609000604
Հ/Հ 2478000008010999
<<Արդշինբանկ>>ՓԲԸ<<Ջերմուկ>> մ/ճ
Գործադիր տնօրեն
Կորյուն Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 25 » « 09 » 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորսի Օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգման»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

<<	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակ	Հազ. դրամ	
				Միավորի արժեքը	Ընդամենը
1	Հողային աշխատանքներ				
2	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով ինքնաթափ մեքենաների վրա բարձելով	մ^3	280	1.035	289.749
3	III կարգի գրունտի մշակում ձեռքով	մ^3	168	2.445	410.720
4	II կարգի գրունտի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ^3	200	1.022	204.377
5	Հողի հարթեցում տեղում	մ3	248	1.591	394.577
6	Ավելորդ գրունտի հավաքում և բարձում	մ3	19	0.582	11.060
7	Շին աղբի և ավելորդ գրունտի տեղափոխում 1կմ հեռավորության վրա	տ	30.4	4.049	123.081
8	Հիմքեր			0.000	0.000
9	Բնահողի տոփանում խճով խտացում պնևմախտացուցիչներով	մ2	50	0.440	21.990
10	Խճից հիմնատակի իրականացում h=10սմ	մ2	50	1.591	79.552
11	Նախապատրաստական շերտի իրականացում հիմքի տակ B12,5 դասի բետոնից h=10սմ	մ^3	5	44.368	221.839
12	Ներկանյութային մեկուսիչ	մ^2	50.0	3.816	190.795
13	Նախաներկում 2 անգամ	մ^2	50	1.539	76.965
14	Հատակներ			0.000	0.000
15	ե/բ միաձույլ հատակների պատրաստում հիդրոտեխնիկական, F-150, W-6, B-22.5 բետոնից	մ^3	13.2	142.598	1882.295
16	Ամրան Ø10AC-1	տ	0.024	516.258	12.390
17	Ամրան Ø12A500C	տ	0.540	502.249	271.215
18	Ամրան Ø16A500C	տ	0.38	500.658	190.250
19	Հատակի սվաղում ցեմենտային շաղախով	մ^2	50	2.108	105.422

20	<u>Պատեր</u>			0.000	0.000
21	Ե/Բ միաձույլ շրջանակի պատրաստում հիդրոտեխնիկական, F-150, W-6, B-22.5 բետոնից	մ^3	36.6	142.598	5219.090
22	Ամրան Ø10AI	տ	0.08	516.258	41.301
23	Ամրան Ø16A500C	տ	3.000	500.658	1501.975
24	Պատերի սվաղում ցեմենտային շաղախով	մ^2	90	2.108	189.760
25	<u>Ծածկ</u>			0.000	0.000
26	Հորի էլեմենտ ՕՀ-1	հատ	2	132.573	265.147
27	Թուջե մտոցի տեղադրում Φ700մմ	հատ	2	85.463	170.926
28	Ծածկի սալ ՊԿԺ 6,0-1,5	հատ	4	178.196	712.783
29	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.44	281.432	123.830
30	Անկյունակ L100x10մմ	կգ	4	8.796	35.184
31	Ամրան Ø10AI	տ	0.15	516.258	77.439
32	Ե/Բ միաձույլ ծածկի սալի պատրաստում B22,5 դասի բետոնից	մ^3	5	78.698	393.490
33	Ամրան Ø8AI	տ	0.166	501.654	83.275
34	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.44	281.432	123.830
35	Խողովակ DH=76x4մմ	մ	5	4.476	22.378
36	Ամրան Ø10AI	տ	0.02	516.258	10.325
37	Ծածկի հիդրոմեկուսացում իզոգամից 2 շերտ	մ2	50	7.218	360.893
38	Կավի շերտ 200մմ	մ2	50	6.894	344.724
39	DH=76x4մմ տրամագծով պողպատե խողովակի մոնտաժ	գմ	30	7.334	220.028
40	Պոլիէթիլենային խողովակի մենտաժ, օդափոխության համար 150մմ	գմ	8	3.764	30.113
41	Φ76մմ լողանավոր փականի մոնտաժում	հատ	4.0	22.714	90.857
42	Խողովակի ձևավոր մասերի մոնտաժում	հատ	24.0	1.048	25.146
43	<u>ՑԱՆԿԱՊԱՏ</u>			0.000	0.000
44	Աճած ծառարմատների և թփերի հանում ձեռքով	հատ	20	0.220	4.398
45	Հողակույտի հարթեցում ձեռքով	մ3	30	2.445	73.343
46	III կարգի գրունտի քանդում ձեռքով	մ^3	16	2.497	40.443
47	2-րդ կարգի բնահողի փորում ձեռքով	մ3	20	2.031	40.617

48	Քանդաց բուսական հողի շերտի փռում դաշտում	մ3	30	0.401	12.030
49	Ավելորդ գրունտի բարձում, տեղափոխում 1կմ	մ3	6	1.733	10.400
50	Շին աղբի տեղափոխում	տ	7	3.505	24.538
51	ՑԱՆԿԱՊԱՏԻ ԴՐՎԱԳ 1			0.000	0.000
52	Խամքարաբետոնե հիմքերի իրականացում B 15 դասի բետոնով	մ3	18	35.598	640.760
53	Պողպատե խողովակների տեղադրում 60x60x4մմ	մ	130	3.945	512.882
54	Պողպատե անկյունակ 45*45*3մմ	մ	160	1.591	254.566
55	Ամրան Ø10A500C	տ	0.037	463.638	17.155
56	Ամրանային ցանց բջիջ 30*30մմ,3,0մմ հաստ./ցինկապատ /	մ2	140	2.833	396.594
57	Շերտապողպատ 4x30	կգ	10.0	1.190	11.900
58	Շերտապողպատ 6x40	կգ	10.0	1.488	14.876
59	Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում / խողովակ, ցանց, շերտապողպատ, ամրան/	տն	4.00	84.816	339.265
60	Մետաղե էլեմենտների ներկում 2 շերտ	մ2	235	1.268	297.899
61	Մետաղական դարպաս 1 հատ			0.000	0.000
62	Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում / խողովակ, թիթեղ, շերտապողպատ/	տն	0.15	84.816	12.689
63	Պողպատե խողովակների տեղադրում 60x60x4մմ	մ	6	3.945	23.671
64	Պողպատե անկյունակ 45*45*3մմ	մ	20	1.591	31.821
65	Ամրանային ցանց բջիջ 30*30մմ,3,0մմ հաստ./ցինկապատ /	մ2	14	2.833	39.659
66	Պողպատե թիթեղ 3մմ հաստ	մ2	2.0	13.181	26.362
67	Շերտապողպատ 40x6	կգ	1.0	1.190	1.190
68	Շերտապողպատ 4x30	կգ	1.0	1.488	1.488
69	Ծխնի	հատ	4.0	4.476	17.902
70	Բռնակ	հատ	1.0	4.773	4.773
71	Փական,կողպեք	հատ	1.0	5.213	5.213
72	Խամքարաբետոնե շերտի իրականացում B 15 դասի բետոնով	մ3	0.27	35.598	9.611
	Ընդամենը				17394.81
	ԱԱՀ 20%				3478.96
	Ամբողջը				20873.8

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորս հասցեում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ** **Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31** **ՀՎՀՀ՝00846441** **Հ/Հ՝ 900018001231** **Կենտրոնական գանձապետարան** **Գործադիր տնօրեն** **Աշոտ Կիրակոսյան** **/ստորագրություն/** **Կ.Տ**	**ԿԱՊԱԼԱՌՈՒ** **<<Ջերմուկշին>> ՓԲԸ** **Հասցեն՝ ՀՀ ք.Ջերմուկ, Շահումյան 25.** **ՀՎՀՀ 5609000604** **Հ/Հ 2478000008010999** **<<Արդշինբանկ>>ՓԲԸ<<Ջերմուկ>> մ/ճ** **Գործադիր տնօրեն** **Կորյուն Ստեփանյան** **/ստորագրություն/** **Կ.Տ**

Հավելված թիվ 2
« 25 » 09 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍԻ ՕՐՎԱ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՋՐԱՄԲԱՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ	*Ժամկետի հաշվարկն կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*	*75 օր տևողության*
ԸՆԴԱՄԵՆԸ		*Ժամկետի հաշվարկն կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*	*75 օր տևողության*
2	ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐԲԱՏԵՂԻ ԱՂԲՅՈՒՐԱԿԱՊԻ և ՕԿՋ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»	*Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից*	*50 օր տևողության*
ԸՆԴԱՄԵՆԸ		*Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից*	*50 օր տևողության*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ջերմուկշին>> ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ ք.Ջերմուկ, Շահումյան 25.
ՀՎՀՀ 5609000604
Հ/Հ 2478000008010999
<<Արդշինբանկ>>ՓԲԸ<<Ջերմուկ>> մ/ճ

Գործադիր տնօրեն
Կորյուն Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 25 » 09 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
			մարտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45231131/66	Ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշխատանքներ	% ...	% ...	% ...	% ...	% ...	% ...	% ...	% ...	% ...	... %
2	45231131/67	Ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշխատանքներ	-	-	-	-	-	-	6,960,000	6,960,000	6,960,000	6,960,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

*****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ջերմուկշին>> ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ ք.Ջերմուկ, Շահումյան 25.
ՀՎՀՀ 5609000604
Հ/Հ 2478000008010999
<<Արդշինբանկ>>ՓԲԸ<<Ջերմուկ>> մ/ճ

Գործադիր տնօրեն
Կորյուն Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
2019 թ. կնքված
«25» 09
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«25» 09 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
2019 թ. կնքված
«25» 09
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95 ծածկագրով պայմանագրի

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ջերմուկշին>> ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ ք.Ջերմուկ, Շահումյան 25.
ՀՎՀՀ 5609000604
Հ/Հ 2478000008010999
<<Արդշինբանկ>>ՓԲԸ<<Ջերմուկ>> մ/ճ

Գործադիր տնօրեն
Կորյուն Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 6
« 25 » 09 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95 ծածկագրով պայմանագրի

Պատվիրատու
«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 90001800123

Կատարող
<<Ջերմուկշին>> ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ ք.Ջերմուկ, Շահումյան 25.
ՀՎՀՀ 5609000604
Հ/Հ 2478000008010999
<<Արդշինբանկ>>ՓԲԸ<<Ջերմուկ>> մ/ճ

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »_____ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը **«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորսի Օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգման» աշխատանքներ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019թ.
Պայմանագրի համարը՝ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95***

Սույնով Պատվիրատուն և **ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորսի բնակավայրը,** մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95*** պայմանագրի **3.2.3** կետի պահանջները, կազմեցին սույն **ԱԿՏ-ը** հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, **ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորսի բնակավայրը** հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից Նախագծով նախատեսված տարածքը:

Տարածքը հանձնեց	Տարածքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 6.1
«25» 09 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95** ծածկագրով պայմանագրի*

Պատվիրատու
«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 90001800123

Կատարող
<<Ջերմուկշին>> ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ ք.Ջերմուկ, Շահումյան 25.
ՀՎՀՀ 5609000604
Հ/Հ 2478000008010999
<<Արդշինբանկ>>ՓԲԸ<<Ջերմուկ>> մ/ճ

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »_____ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը **«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորբատեղի աղբյուրակապի և ՕԿՋ-ի հիմնանորոգման» աշխատանքներ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019թ.
Պայմանագրի համարը՝ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95***

Սույնով Պատվիրատուն և **ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորբատեղ բնակավայրը,** մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/94/95*** պայմանագրի **3.2.3** կետի պահանջները, կազմեցին սույն **ԱԿՏ-ը** հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, **ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորբատեղ բնակավայրի** հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից Նախագծով նախատեսված տարածքը:

Տարածքը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Տարածքը ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.